ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԼԱՏՖՈՐՄ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՖՈՐՈՒՄ

Funded by the European Union

Ամփոփ առաջարկություններ և դիտողություններ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

I. Ս.թ. /2021/ սեպտեմբերի 26-ին Լճաշենում տեղի ունեցած Աշխատաժողովի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության (այսուհետ՝ ՇՄԱԳՓ) մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկման ընթացքում մասնակիցների կողմից ներկայացվեցին կարծիքներ, առաջարկություններ և դիտողություններ ինչպես ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության կողմից մշակված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) շուրջ, այնպես էլ՝ ոլորտին առնչվող մի շարք այլ հարցերի վերաբերյալ:

Մասնավորապես նշվեց, որ.

1/ շահագրգիռ ՀԿ-ների ու մասնագետ-փորձագետների կողմից բազմիցս կարևորվել է հանրապետությունում ՇՄԱԳՓ գործընթացների օրենսդրական կարգավորման բարեփոխումներին զուգընթաց մեր երկրի բնապահպանական քաղաքականության մշակման անհրաժեշտությունը: Նշվեց, որ անհրաժեշտ է նախ մշակել անփոփոխելի, հստակեցված, կոնկրետ նպատակներով ու սկզբունքներով, և որ ամենակարևորն է՝ ազգանպաստ, Հայեցակարգ: Ինչի հիման վրա էլ պետք է մշակել ու հաստատել անչեղարկելի, մշտական և կայուն մոտեցումներով բնապահպանական կուռ ու հեռահար ազգային քաղաքականություն, որի առանցքային գաղափարը պետք է լինի երկրի բնական ռեսուրսների ճիշտ, խելամիտ և բանական օգտագործումը՝ ի նպաստ ներկա և ապագա սերունդների կյանքի ու առողջության:

Առավելևս, որ հենց ՀՀ Սահմանադրությամբ է ամրագրված, որ մեր «պետությունը վարում է ներկա ու ապագա սերունդների բնապահպանական անվտանգությունն ապահովող քաղաքականություն» /Հոդվ. 33.1./: Սահմանադրության մեջ գրված է՝ որ վարում են քաղաքականություն, բայց այդ քաղաքականությունը, փաստորեն, ապրիորի է: Մշակված և հաստատված քաղաքականություն դեռ ՉԿԱ:

2. Մշակվելիք Բնապահպանական Անվտանգությունն Ապահովող Քաղաքականության հիմքում ՊԵՏՔ է դրվի՝ բնապահպանական անվտանգության ապահովման համար, ինչպես նաև շրջակա միջավայրին հասցվելիք վնասի համար պատասխանատու պաշտոնատար

անձանց **խստագույն** պատասխանատվության գաղափարը: Ուստի և, գործող օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասը պետք է վերանայվի և շարադրվի հետրյալ կերպ.

«*Նախատեսվող գործունեության կամ հիմնադրութային փաստաթղթի գործողության հետևանքով մարդու առողջության կամ շրջակա միջավայրի վրա հնարավոր ռիսկի դեպքում պատասխանատվությունը կրում են և ձեռնարկողը և դրական եզրակացությունը ստորագրած պաշտոնատար անձը*»:

Անհրաժեշտ է օրենսդրորեն բարձրացնել ՇՄԱԳՓ ստորագրած պաշտոնատար անձանց, ինչպես նաև մասնագիտական/փորձագիտական եզրակացություն տված փորձագետների ու մասնագետների պատասխանատվության հարցը: Վերջինները պետք է պարտավորված լինեն մասնակցելու հասարակական լսումներին և, անհրաժեշտության դեպքում՝ պատասխանելու իրենց իրավասության շրջանակում տրվող հարցերին: - **Ուստի** պետք է գործող օրենքի Հոդված 29.ում՝ ավելացնել,՝

«) մասնակցել իր կողմից փորձաքննվող փաստաթղթերի հասարակական քննարկումներին.

.) Փորձաքննության գործընթացում ներգրավված փորձագետը պատասխանատու է իր կողմից կազմված մասնագիտական եզրակացության մեջ ոչ ճիշտ տվյալներ, տեղեկություններ ներառելու և սխալ եզրահանգումների համար:

).Փորձագիտական եզրակացությունը ստորագրած անձը անձնական պատասխանատվություն է կրում ոչ ճիշտ, թերի տվյալներով փորձագիտական եզրակացության համար:»:

Հետևաբար, համապատասխան լրացումները և փոփոխությունները պետք է կատարվեն նաև ՀՀ քրեական ու վարչական օրենսգրքերում, ինչպես նաև «Բնապահպանական վերահսկողության մասին» օրենքում:

Այս ամենի ներառմամբ պետք է հրատապ ընդունվեն նաև հետևյալ երկու օրենքները.

ա/ գործող օրենքի 28-րդ Հոդվածի 4-րդ մասում հիշատակվող կարգը սահմանող օրենքը. -/Հոդ. 28, 4. Փորձաքննության ընթացքում **փորձագետների ներգրավումը կատարվում** է պայմանագրային հիմունքներով՝ **օրենսդրությամբ** սահմանված կարգով/,

բ/ գործող օրենքի 32-րդ Հոդվածում հիշատակվող կարգը սահմանող օրենքը. -/Հոդ. 32. Սույն օրենքով սահմանված պահանջների կատարման նկատմամբ **վերահսկողությունն իրականացնում** են լիազոր մարմինը և **հանրությունը՝ օրենքով** սահմանված կարգով:/

3. Նկատի ունենալով, որ մասնագետ-փորձագետների կողմից Նախագծին արվող առաջարկությունները, դիտողությունները, լրացումներն ու փոփոխությունները **<u>ծավալուն են</u>**, անհրաժեշտ է առաջարկել Նախագծի հեղինակներին մշակել և քննարկման դնել ոչ թե գործող օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարող օրինակագիծ, այլ՝ բոլորովին նոր Օրենք, համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34 հոդվածի 3-

րդ մասի, - ըստ որի, եթե նորմատիվ իրավական ակտում /տվյալ դեպքում՝ օրենքում/ կատարվելիք փոփոխությունները կամ լրացումները ծավալուն են, ապա կարող է ընդունվել ամբողջությամբ նոր օրենք:

4. Ելնելով երկրում էկոլոգիական անվտանգություն ապահովելու պետության պարտավորության սահմանադրական դրույթից՝ անհրաժեշտ է ՇՄԱԳՓ նոր օրենքը դարձնել ոլորտը կարգավորող հարակից այլ օրենքների, նույնիսկ օրենսգրքերի, համար ՛՛հովանոցային՛՛ օրենք: Այսինքն՝ մնացած բոլոր օրենքների (օրինակ՝ Ընդերքի օրենսգրքի, Քրեական օրենսգրքի, Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի, Բնապահպանական վերահսկողության մասին օրենքի և այն) դրույթները պետք է բխեն այս օրենքի սկզբունքներից ու պահանջներից և համահունչ լինեն միմյանց: Այս օրենքները համատեղ պետք է վերանայել, կարգավորել, նոր միայն այդ դեպքում մենք կունենանք իրավունքների պատշաճ ձևավորում, տրամադրում, պատշաճ վերահսկողություն և վերահսկողության արդյունքում պատշաճ կկիրառվեն պատժիչ վարչական կամ քրեական վարույթները, կամ ընդունել վարչական ակտեր, օրինակ՝ տված թույլտվությունները ուժը կորցրած ճանաչելու և այլնի մասին: Այս շղթան պետք է աշխատի:

Օրինակ՝ միանշանակ քրեական օրենսդրությամբ պետք է ամրագրվի և խստագույն պատժի ենթակա լինի պաշտոնատար անձը՝ հատկապես ՇՄԱ Գնահատման ու փորձաքննական եզրակացություններում թույլ տված կեղծումների համար /ՀՀ քր.օր-ի Հոդված 314. Պաշտոնեական կեղծիքը/: Պետք է պատասխանատվության ենթակա լինեն նաև եզրակացության տրմանը մասնակացած մասնագետներն ու փորձագետները և դա պետք է համահունչ կերպով ամրագրվի բոլոր շաղկապված օրենքներում:

5. Ինչպե՞ս կարելի է թույլ տալ, որ Լիազոր մարմինը փորձաքննական եզրակացությունը կազմելիս, ինքն իրականում չստուգի և չհավաստիանա հնարավոր վնասակար ազդեցության բացակայության մեջ, օրինակ՝ իր իսկ աչքով չուսումնասիրի նախատեսվող գործունեության համար նախատեսված և դրան հարակից տեղանքը, և իր եզրակացության /նկարագրական մասում/ մեջ գրի միայն ձեռնարկողի կողմից ներկայացրածը, ու, հետևապես, դրական կամ բացասական եզրակացություն տա հիմք ընդունելով բացառապես ձեռնարկողի կողմից հրամցված տեղեկատվությունն ու տվյալները:
Եզրակացությունը միանշանակ պետք է տրամադրվի համաձայն հայտով ներկայացված տարածքում Լիազոր մարմնի /աշխատանքային խմբի/ կողմից իրականացված ուսումնասիրությունների և դիտարկումների հիման վրա տրված եղրահանգումների: Ինչ է համար էլ, հետևապես, տվյալ մասնագետ-փորձագետները, ինչպես նաև ընդհանուր եզրակացությունը ստորագրած պաշտոնատար անձը, պետք է կրեն անձնական-անհատական պատասխանատվություն:

6. Կրկին անգամ շեշտելով՝ ըստ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34 հոդվածի, բոլորովին Նոր օրինագծի մշակման անհրաժեշտությունը, հարկ ենք համարում

կարևորել գործող մի քանի դրույթների հրատապ հստակեցման, մանրամասնման և փոփոխման խնդիրը:

Օրինակ՝ բացարձակապես անընդունելի է հետևյալ դրույթը - «Փորձաքննական գործընթացը սահմանված ժամկետում չիրականացնելու դեպքում փորձաքննական **եզրակացությունը համարվում է դրական»:**

Ինչո՞ւ պետք է անպատասխանատու պաշտոնատար անձանց պատճառով տուժեն բնությունն ու շրջակա միջավայրը և վնաս կրեն ոչ միայն ներկա, այլև ապագա սերունդները:

II. Լճաշենի քննարկման ընթացքում մասնակիցների կողմից Նախագծի վերաբերյալ ներկայացվեցին առաջարկություններ, որոնց բազմաթիվ և մանրակրկիտ լինելու պատճառով դրանք կներկայացնենք առանձին, կից ֆայլերով, հենց մասնակիցների կողմից ներկայացված ձևաչափով: Այդուհանդերձ, այստեղ հարկ ենք համարում որոշներին անդրադառնալ: Նշենք, որ առաջարկությունները վերաբերում էին ՇՄԱԳՓ գործընթացին առնչվող շատ կարևոր և էական հարցերի.- օրինակ.

- ✓ ո՞ր պահից պետք է սկսվեն նախատեսվող գործունեության կամ հիմնադրութային փաստաթղթի հանրային քննարկումները;
- ✓ ո՞րոնք պետք է լինեն հանրային քննարկումների քայլ առ քայլ և մանրամասն գործողությունները;
- ✓ ինչպե՞ս պետք է կազմվեն և ովքեր պետք է լինեն հանրային քննարկումների/լսումների արձանագրությունների կազմման պատասխանատուները;
- ✓ ո՞ր պարագայում է ՇՄԱԳ փորձաքննական եզրակացությունը ուժը կորցրնում;
- ✓ ինչպե՞ս պետք է ապահովվի ***ազդակիր բնակավայրի յուրաքանչյուր անձին***՝ իր բնակավայրում նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հետ կապված ողջ տեղեկատվությունը: Ի դեպ, այս խնդրի հետ կապված՝ առաջարկվում է գործող օրենքում /Հոդված 13.1.5) պարտադիր ավելացնել այսպիսի դրույթ.- «Ապահովել ազդակիր համայնքի յուրաքանչյուր անձին հասանելի տեղեկատվություն՝ կապված համայնքում նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հետ»:
- ✓ Ո՞ր բնակավայրերը կարող են համարվել ազդակիր:
- ✓ Առողջապահության նախարարության ներգրավվման անհրաժեշտությունը ՇՄԱԳ փորձաքննության մեջ:

Առաջարկվող բոլորովին Նոր օրենքի Նախագծում և բնապահպանական նոր օրենսդրության հիմնադրութային փաստաթղթերում պետք է ապահովվի հետևյալը.

1. Ազգային, մշտական և կայուն մոտեցումներով բնապահպանական քաղաքականության մշակում՝ մինչ օրենքի բոլորովին նոր նախագծի ստեղծումը:
2. Բնապահպանական օրենքի և կառավարման նկատմամբ արևմտյան և Եվրասիական միության մոտեցման ընկալում:
3. ՇՄԱԳ օրենքի գերակայության հաստատում երկրում գործող մյուս բոլոր ոլորտների օրենքների և ենթաօրենսդրական ակտերի նկատմամբ:
4. Ռազմավարական Էկոլոգիական Գնահատում, Սոցիալական ազդեցության գնահատում և ՇՄԱԳ ***առանձին*** օրենքների պատրաստում՝ ՇՄԱԳ-ի գերակայությամբ:
5. Արեւմտյան օրենսդրության մեջ օգտագործվող ՇՄԱԳ գործընթացի տերմինների օգտագործումը `բառերի իմաստը պահպանելու և իրականացման ժամանակ տերմինի ճշգրիտ ձևակերպում: Կարևոր է օգտագործել միջազգային իրավունքում տարածված տերմինաբանությունը, եթե հայերենում այլ համապատասխան այլընտրանքներ չկան, ավելին, յուրաքանչյուր տերմին պետք է ունենա ոչ միայն տեսականորեն բացատրված, այլև գործնականորեն ճշգրիտ սահմանում: Ահա թե ինչու է առաջարկվում սկսել իրականացումից, ինչը կօգնի գտնել ՇՄԱԳ գործընթացի համատեքստում ընթացակարգերը նկարագրելու ճիշտ բառը:
6. Ստեղծել ճշգրիտ և չափելի սահմանաչափեր և ապահովել դրանք ճիշտ դասակարգմամբ `իրավական տեքստերում իրենց նշանակալի և հավանական ազդեցությունների մակարդակի բնորոշման համար:
7. Օրենսդրական դրույթներում ներառել կուտակային ազդեցությունների նշանակության գնահատումը:
8. Սքոփինգի և սքրինինգի հաստատում ` որպես պաշտոնական/պարտադիր պահանջներ, որոնք պետք է իրականացվեն բոլոր այն դեպքերում, երբ ՇՄԱԳ կարող է պահանջվել ` օգտագործելով մոդել, օրինակ ` ԵՄ ՇՄԱԳ դիրեկտիվի տարբերակով :
9. Կառուցապատողի կողմից ավելի լայն հանրության համար ներկայացված բնապահպանական հայտարարության ոչ տեխնիկական ամփոփում/նկարագիր:
10. Կառուցապատողի և փորձագետների պահանջը `բաց և թափանցիկ կերպով մանրամասնորեն տեղեկացնել ծրագրված զարգացման ծրագրերի քայլերի, դրանց վնասակար և շահավետ կողմերի մասին:

11. Օրենքը պահանջում է հանրային լսումների ճշգրիտ իրականացումը: Կառավարության հրամանների կամ ուղեցույցների նախագիծ/կարգ, որոնք մանրամասն կհրապարակեն հանրային լսումների ընթացակարգը:
12. Մշակումից առաջ ելակետային մոնիտորինգ և զարգացման ավարտից հետո պարբերաբար զարգացման նախագծերի աուդիտ `օգտագործելով բնապահպանական հիմնական բնութագրերի նախնական գնահատականները՝ որպես ՇՄԱԳ Հասարակության իրազեկման և տեղեկատվության տարածման մեթոդներից հետո զարգացման պայմանների և առանձնահատկությունների հաջողության կամ ձախողման գնահատման ձևանմուշ՝ բարելավում կառավարության համար:
13. Դատարանների գործունեությունը և դատական վեճերի խրախուսումը, դիրքորոշման ընդլայնումը, արդարադատության հասանելիությունը պետք է իրականացվեն ՇՄԱԳ գործընթացի իրականացման և իրավական նախագծերի շարունակական և կայուն բարելավման համար, ինչպես նաև վերջում լավ բնապահպանական հայտարարություն ստեղծելու համար:
14. Շահագրգիռ կողմերի իրավական վիճակի հստակեցում՝ իրավական դրույթների միջոցով:
15. Կառուցապատողների համար իրավական ուղեցույցների պատրաստում և իրավական պահանջների իրականացմանն աջակցություն: Սա անհրաժեշտ է օրենքի պահանջները հասանելի տեքստով նախաձեռնողներին և հանրությանը փոխանցելու համար:

III. Լճաշենի քննարկման ընթացքում նշվեց նաև, որ այս (2021) տարվա օգոստոս-սեպտեմբեր ամիսներին Ֆեյսբուք հարթակով «Կանաչ Հայաստան» բնապահպանական-կրթական ՀԿ-ի կողմից հանրայնացվել էր մի քանի ՀԿ-ների ներկայացուցիչների և փորձագետ-մասնագետների առաջարկները՝ Նախագծի վերաբերյալ, հետևյալ հղումներով.

Նազելի Վարդանյան - Հայաստանի Անտառներ ՀԿ նախագահ
https://www.youtube.com/watch?v=n9O_dnUM8yA

Մարի Չաքրյան - «Հանրային իրազեկման և մոնիտորինգի կենտրոն» ՀԿ նախագահ -
https://www.youtube.com/watch?v=otPYLFZGgvI

Վիկտորիա Բուռնազյան - Էկոլուր տեղեկատվական ՀԿ փոխնախագահ
https://www.youtube.com/watch?v=ifE_vCMHtN0

Գայանե Աթոյան - բնապահպանական իրավագիտության դոկտոր, Հետազոտությունների բաժնի ղեկավար, Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն ՊՈԱԿ

/Շրջակա միջավայրի վրա ազդեցության օրենքների և քաղաքականությունների համեմատական նկարագիր ՀՀ-ի, ԱՄՆ-ի և ԵՄ երկրների միջև/ https://www.youtube.com/watch?v=JSY9YyR5Vhs

Օլեգ Դուլգարյան - «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ նախագահ https://www.youtube.com/watch?v=hSksjN_J7p8&fbclid=IwAR1WSyI9spuuDEUmpeSAtQmtEMtWvghsuv98j1Qq_fDFrc1BYRzzvqTgYng

Արթուր Համբարձումյան - էկոիրավունքի մասնագետ; https://www.youtube.com/watch?v=EX8RZMUzI_c

Բացի այդ, առաջարկությունների ընդհանուր փաթեթն առանձին, մեկ հղումով՝

https://www.facebook.com/GreenArmeniaNGO/posts/1253094218496902 ,

ս/թ սեպտեմբերի 23-ին ուղարկվել է Շրջակա միջավայրի /ՇՄ/ նախարարություն:

Դրանում մասնավորապես շեշտվում է, որ ՇՄԱԳՓ օրենքի նախագծում անհրաժեշտ է՝

• փոխարինել «ազդակիր համայնքը» «ազդակիր բնակավայրով» ,

• հստակեցնել ազդակիր բնակավայրի ընտրության չափանիշները,

• իրազեկել հանրությանը ծրագրի ամենավաղ փուլից հնարավոր բոլոր ձևերով, ապահովել հանրության պատշաճ մասնակցությունը,

վերադարձնել նախնական գնահատման փուլը,

• ավելացնել մարդու առողջության վրա ազդեցության գնահատումը և փորձաքննությունը որպես առանձին փորձաքննություն,

• ներառել տեղեկատվություն շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա ազդեցության, վնասի հստակ գնահատման և փոխհատուցման մեխանիզմների վերաբերյալ,

• հստակեցնել «նոր էկոլոգիական գործոններ» եզրույթը, որով փորձաքննական եզրակացության ուժը կորցրած է ճանաչվում,

• ստեղծել մեխանիզմ փորձաքննական մարմնին կեղծ, թերի, սխալ, ոչ հավաստի տվյալներ ներկայացնելու համար, ինչը կարող է փորձաքննական եզրակացությունը ուժը կորցրած ճանաչելու հիմք դառնալ,

• ընդունել փորձաքննության արդյունքում շրջակա միջավայրի լիազոր մարմնի ղեկավարի որոշումը փորձաքննության դրական եզրակացության ընդունման կամ

մերժման մասին որպես հիմք, որն էլ կդիտարկվի որպես վարչական ակտ և հետագայում հնարավոր կլինի վիճարկել այն դատարանում,

• ճանաչել փորձաքննական եզրակացությունը ուժը կորցրած՝ ձեռնարկողի կողմից 1 տարվա ընթացքում գործունեություն չծավալելու պարագայում, այլ ոչ 3 տարում, ինչպես առաջարկվում է Նախագծում,

• դարձնել ՇՄԱԳ օրենքը համահունչ ոլորտը կարգավորող այլ հարակից օրենքների հետ,

• հնարավորություն տալ ՀԿ-ներին ազատ դիմել դատարաններ (ՀԿ-ների մասին օրենքով), չսահմանափակել, օրինակ, մարդու առողջության վրա ազդեցության վերաբերյալ գործերով դատարան դիմելու հնարավորությունը:

<u>Առ այսօր նախարարությունը դրան չի արձագանքել:</u>

Քանի որ կարծում ենք, որ ՇՄ նախարարությունը հնարավոր չի համարի միանշանակ ընդունել իրեն ներկայացված առաջարկությունները, -

Խնդրում ենք Արևելյան Գործընկերության Հայկական հարթակին աջակցել, որպեսզի նախարարությունն առանձին քննարկում կազմակերպի և պարտադիր, համատեղ, ամբողջությամբ լսի առաջարկությունների հեղինակներին:

«Քաղաքացիական հասարակության դերը բնապահպանական հարցերում որոշումների կայացման գործում» 3-րդ ԱԽ աշխատաժողովին պանելային քննարկման սույն Ամփոփ ներկայացումը պատրաստեց Ռուզաննա Ղազարյանը՝

ԱլԳ ՔՀՖ ՀԱՊ 3-րդ Աշխատանքային խմբի անդամ

Քաղ. Ծառայության 2-րդ դասի խորհրդական,

էկոլոգիական իրավունքի մասնագետ,

«Դալմա-Սոնա» հիմնադրամի ՀԽ Նախագահ

15.10.2021թ.

Միջոցառումն իրականացվում է ՔՀՖ Հայաստանի ազգային պլատֆորմի քարտուղարության «Աջակցություն ՀԱՊ աշխատանքային խմբերի գործողություններին» ծրագրի շրջանակում:

Սույն հետազոտությունը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ: Սույն հետազոտության բովանդակությունը բացառապես հեղինակ(ներ)ի կարծիքն է եւ կարող է չարտացոլել Եվրոպական միության տեսակետը: